

ՀԱՇՎԿ ՈՍԿԵՂԻՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՅԼՈՎՔՆ ՀԱՆԴԵՐՁ

ԸՆԴ ԽՆԱՄՈՎ

Օ. ՄԱՅՐԻԱՆ ԳԱՐԵԳՈՒԹՅՈՒՆ ԵԿ Օ. ԳՈՒՐԳԵՆԻ

ՏԱՐԻ Բ.

ԹԻՒ ԺԱ. ԵՒ ԺԲ. — 1 ՆՈՑԵՄԲԵՐ ԵՒ ԴԵԿՑԵՄԲԵՐ



Ի Կ. ՊՈԼԻՍ

ԱՅ ՅՈՎՈՒԹՈՅ ԳՈՎԱՅՆՈՅ

1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ




ՊԱՏՄԱԿԱՆ

Պատմութիւն Հայ մատենագրութեան Ա. Մ. Գ.
Քննական պատմութիւն Հայոց Ա. Մ. Գ.
Մատեան Նորոց Յուստինիանոսի կայսեր . . . Գ. Սեհեսըն

ԲՈՆԱԾՈՒՐԵԿԱՆ

Բանք զՀայ լեզուէ Պ. թ.
Առանձին բանք Հայերէն լեզուի (Ե) Յ. Գ.



ՃԱՇԱԿ

ՊԱՎԻՊԱՐԱՆ ՊՊՈՅԹԹԵԼԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՍԱԶԲԱՆԵ ԱՆՏԻ ՄԻՒՆՉԵՒ ՑԱՌԱՋԻՆ ԿԵՍ ԱՆԴԻ Ե. ԴԱՐՈՒ

ՀԱՄԱՌՈԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ ՊԱԽՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

Հատակոտորս այս որ է ի յառաջաբանէ թղթոցն մեծի առաքելոյն Հեթանոսաց՝ աւանդէ համառօտիւ այլ հռետորական ոճով զվարս Պաւղոսի յառաջ քան զդարձն և մանաւանդ զկնի դարձի նորա ի գրիստոնէութիւն, և է թարգմանութիւն ի յունէ։ Յօրինիչն, ո ոք և իցէ, ասէ զանձնէ գրեալ ի հրամանէ ճոխագունի ուրուք քան զինքն, և զոր կոչէ Հայր պատուական։ Պատմութիւնն է քաղեալ ի գործոց առաքելոց և ի թղթոց նորին իսկ Պաւղոսի, ունի և ինչ ինչ յաւանդութենէ, որպէս զոր ինչ զհանգամանաց մահուն նորա ասէ։ Լեզուն և՛ ըստ յստակութեանն և՛ ըստ կարգին բերէ յանձին զստոյգ դրոշմն անգին մնացորդաց դպրութեան Ե. դարու։

« Ընդ ուսումնասէր փոյթ քոյոյդ սիրոյդ զարմացեալ, ո հայր պատուական, ակնածութեան և հաւանութեան անսացեալ, ընդ նեղ և ընդ նուրբ ծերպս պատմութեան զանձն ի ներքս արկի, զյառաջաբան Պաւղոսի ի մատենիս գրել։ Կարի իսկ յոյժ մեծ քան զմեզ գործ առեալ զանձամբ առ երկիւղի անհնազանդութեան, զմտաւ ածեալ զայն որ յառակսն պատմի՝ եթէ Որդի անհնազանդ ի կորուսն եղիցի, և հնազանդն արտաքոյ նորին եղիցի։ Արդ, օ՛ն առեալ զքո առջապատ տացես ի սատարութիւն, և ըստ օրինակի նաւացն թեւոց թռուսցես զիս նոքօք առ Աստուած։ որպէս և յայն-

ժամ մեծին Մովսիսի տարածեալ զբազուկս լինէր պաշտպան իսրայելեան բանակին , զի և իմ խուսափեալ յօդական այսոցն ի վերայ յարուցելոց՝ ուղղեալ՝ զմակոյկ բանին գիմեցից յապահով և ի խաղաղ նաւահանգիստ : Եւ արդ սկսեալ ի ճառիս ըստ օրինակի ճշմարտութեանն , որպէս և էն իսկ , ըստ խոնմ կարի կարգեցից զպատմութիւնն :

Պաւղոս առաքեալ երայեցի էր յազգէ , ի գնդէ Բենիամինի , փարիսեցի ուսմամբ , առ ոտո Գամաղիելի հաւատարիմ վարդապետի ըստ օրինացն Մովսիսի խրատեալ և վարժեալ . հանդերձ այսոքիւք և ի Ավելիկեցւոց ի հոյակապ և ի հոչչակաւոր և յականաւոր ի Տարսոն քաղաքի բնակէր : Հալածէր և աւար հարկանէր զեկեղեցին Աստուծոյ , վասն որոյ և այնոցիկ որ սպանանէին զՍտեփանոս զառաքեալն և զնախավկայն՝ կամակից և հաղորդ էր սպանութեանն , զամենայն զքարկոծչացն զհանդերձս առեալ՝ յինքն ամփոփեալ պահէր , զի զամենեցուն զձեռս պարապեցուացէ ի սպանութիւնն և գլխաւոր ընդ խաղմարարսն երեւեալ՝ ամենայն ուրեք ջանայր զաստուածութեանն պատգամաւորսն շիջուցանել : Բազում ինչ և մեծամեծ այն էր որ ի նմանէ անցք ընդ եկեղեցին անցանէին . և ոչ իւիք ի յաճախութենէ մոլորութեանն նուազեալ գտանէր , և այնու աստուածապաշտ լինել կամէր , և մեծամեծ ինչ ուղղութիւնս կարգել կարծէր , որպէս և ինքն իսկ իւրօվին ի թուղթսն խոստովան լինի , և Ղուկաս պատմէ յերկրորդում գիրսն իւրում : Ոչ միայն ի վաղուց հետէ ըստ օրինակի բազմաց ի Նրէց անտի առեայր և աւոլոց ելանէր ի քարոզութենէ ճշմարտութեանն , այլ եւս առաւել զամենայն ազգն գրգռէր ի բարկութիւն : Քանզի իբրեւ ետես զքարոզութիւնն պայծառացեալ և զբանն ճշմարտութեան առաւել քան զհրէական վարդապետութիւնն ծաղկեալ , խանտացեալ ընդ իրսն՝ կարծէր եղծանել զմեծամեծ կարգս վարդապետութեան նոցա , և զամենայն զփոյթ և զյօժարութիւն հակառակ եկեղեցւոյ խաչանցն սրէր , որպէս զի զնոսա ի ճշմարիտ վարդապետութենէն մերժիցէ , կամ վրէժս ինչ արժանի հաւատոցն որ ի Քրիստոս իցէ՝ գործիցէ :

Արդ , առեալ Պաւղոսի թուղթս ի քահանայապետիցն և

ի վարդապետաց որ ի ժամանակի անդ էին՝ առ այնոսիկ որ ի Դամասկոս Հրեայքն էին՝ տանէր։ Դիմեալ երթայր մրմռեալ յարուցեալ իբրեւ զհեղեղատ սաստիկ , ողողելգերիել կարծէր զայնոսիկ որ ի Դամասկոս աշակերտքն էին , և յիւր կորըստեան խորխորատն յուղարկել։ Իբրեւ գիտաց Տէր եթէ պայիրատ մոլորութիւն գոգցես թէ իբրեւ ի պատճառս արդարութեան կամաց ստացեալ ունէր (նա) զմիջոցաւ ճանապարհին երեւեցաւ։ Եւ այնպիսի փոփոխումն առնէր , մինչ , զայն որ այնչափ Աղանս հակառակ եկեղեցւոյն հնարէր , և զամենայն աշակերտեալսն միանգամայն կորուսանել կարծէր , յանկարծակի և առժամայն իւր սիրելի և հաւատարիմ պատրաստէր , զի պաշտօնեայ Յիսուսի վաղվաղակի հակառակորդն լինէր , և նոյնժամայն զհրամանս մոլորութեանն ի բաց ընկեցեալ՝ ի պատգամաւորութեաննն պայման փոխէր , և զիրիստոսի աստուածպաշտութիւնն խոստովանէր , և առաքէր առ Անանիա ոմն աշակերտ դամասկացի։ Իբրեւ ետես ճշմարտութեանն քննիչ Աստուած յածուցեալ զայրն և ի լաւութիւն եկեալ ի չարութենէ անտի , ոչ այլազդ ինչ եթէ ոչ այնպէս զերծանել նմա ի պատժոց անտի համարէր Տէր։ Նրթայր այնուհետեւ մկրտէր , և անձառ խորհրդոցն լինէր խորհրդակից , և պաշտպան և հմուտ մարտակից քարոզութեանն , և զնոր քարոզութիւնն հաւատացեալ նմա յԱստուծոյ՝ նորոյ փրկութեան գտանէր պատճառս։ Այնչափ փոփոխումն գըտեալ էր երանելոյն Պաւղոսի , մինչեւ անուանն եւս փոփոխումն լինէր . Սաւղոսն ընդ ընդհանուր լցեալ եկեղեցիս՝ Պաւղոս անուանէր , և այնպէս ի գլխաւոր աստուածպաշտութեան նախանձ հասեալ , մինչ զի ի ճշմարտութենէ աշակերտացն թէ երբեք մեկուսի լինել դիպէր , թղթովք հաստատէր , զի մի միայն ի գործոց , այլ և ի բանից առ յապայ ստացեալ ունիցին զվարդապետութիւնն . և յերկոցունց կողմանց ամրացեալք , անշարժ զաստուածպաշտութեանն հաստատութիւն կրիցեն յանձինս։ Յետ սակաւ ինչ ժամանակի դարձեալ յԵրուսաղէմ դիմեալ երթայր տեսանել զՊետրոս . ուր և բաժանէինն իսկ ի միջի իւրեանց զամենայն տիեզերս , զհեթա-

նոսաց զկողմն առեալ ի բաժնի Պաւղոսի , քանզի հրէական կողմն հասեալ էր ուսուցանել Պետրոսի : Ընդ բազում քաղաքս և ընդ բազում աշխարհս հատեալ անցեալ՝ գրեթէ զամենայն կրտիկեցիս կրօնիւք աստուածպաշտութեամբն Քրիստոսի ելից՝ բազում և պէս պէս չարչարանս կրեալ ժուժկալութեամբն վասն Քրիստոսի հաւատոցն , տարեալ բազում և ազգի ազգի վշտաց , զորս ինքն մի ըստ միոջէ գրէ , պկեալ վասն աւետարանին , և ամենայնի այնմ յաղթեալ և մերժեալ ի բաց հաւատովքն : Անագան ուրեմն դարձեալ Պաւղոս ելանէր յԵրուսաղէմ յանձանձել զուրբան որ անդ էին , և աղքատացն դարմանս բաշխել : Այն ինչ լինէր նորա անդր հասանել , և ամբոխ յուղէր ի քաղաքին , և ռամիկն գրգռէր զաղմուկ , մինչեւ ամենայն Հրեայքն առհասարակ խոռովիչին , զի անհնարին և ծանր աղէտս համարէին զնա ամբաստան ունել , որ երբեմն առաջնորդ և հաղորդ էր մոլորութեանն նոցա , և փոյթ յանձին կալեալ կամէին սպանանել զնա . այլ հասեալ վաղվաղակի կիւսիայ հազարապետի՝ թափէր զնա ի ձեռաց նոցա , և զօրական օգնականութեամբ իբրեւ զայր մի պարտաւոր ի կեսարիա առաքէր . և առեալ ածէին զնա առ դատաւոր ազգին որում անուն էր Փելիքս : Եւ արդ իմացեալ Պաւղոսի թէ դաւաճանութիւն իմն լինէր նմա ի Հրէից անտի , վաղվաղակի յատեան կայսեր բողոք հարկանէր : Հրաման լինէր նմա առժամանակին մերժել յատենէ անտի . ի դերեւ ելանէր և Հրէիցն խոկացեալ դաւաճանութիւնն : Ապա և ի Հռոմ իսկ առաքէր յիշսանաց անտի առ կայսր , և անդ զիւր նահատակութիւնս ցուցեալ , և ի վերայ նոցին ճգնութեանց աշխատութիւն յանձին կալեալ , վախճան եւս կենաց ի վերայ ճշմարտութեանն կրօնից ընդունէր , քանզի լաւ համարէր ընդ Քրիստոսի լինել քան ի մահկանացու և յանցաւոր կեանս յամել : Յետ սակաւ միոյ ժամանակի կամեցեալ ներոնի կայսեր հանել զնա յայսց կենաց , զճշմարիտ և զարդարեւ կեանսն ընորհէր նմա , և ժառանդաւոր երկնից կացուցանէր զոր յերկրէն վրիպեցուցանէր : Եւ անդ իսկ երանելոյն Պաւղոսի զբարւոք պատերազմն պատերազմեալ , որպէս և լոյն ասէ , աստուածայալթ պատկան Քրիստոսի վկայիցն պսաւնքն ասէ , աստուածայալթ պատկան Քրիստոսի վկայիցն պսաւնքն ասէ :

կեցաւ : Եւ ի Հռոմայեցւոց ի գեղեցիկ և յարքունական ապարանսն զնորա նշխարս ոսկերացն ամփոփեալ՝ ամի ամի զօր յիշատակի նորա տօնախմբեն : Յառաջ քան զերիս կաղանդացն Յուլեայ , որ օր վեց է Նոոմին ամսոյ որ է Մարերի , առնեն տօն մարտիրոսութեան նորա : Եւ բազում եւս յառաջ քան զայն ժամանակ խրատ եւս վասն վարուց և առաքինութեան կարգեաց երանելին յաշխարհի , և բազում եւս վասն պատշաճ գործոց մարդկան յօրինեաց թելադրութիւն , և ամենեւին բնաւին իսկ չորեքտասանեքումիք թղթովք այսոքիւք զմարդկան նկարեաց զառաքինութիւն :

Ի ՔՐՈՆԻԿՈՆԻՆ ԵԽՍԵԲԵԱՅ ՎԱՍՆ ԶԲՀԵԴԵՂԻՆ

Ի ԳՐՈՑ ԱՂԵՔԾՈԱՆԳՐԻ ԲՈԶՄԱՎԻՊԻ

«Կրոջն նմա (Նոյի) ի քուն յայտնէր՝ եթէ հասանելոց էր մարդկան ի ջրհեղեղին սատակել , և հրաման տայր զամենայն զառաջինս և զմիջինս և զվերջինս մատենից վորել և զնել Անրեգ քաղաքին Սիալարացւոց . նաւ գործել և ի ներքս մտանել հանդերձ ազգականօք և կարեւոր բարեկամօք . համբարել ի ներքս ոռնիկս և ըմպելիս , մուծանել և գաղանս և թուչունս և չորքոտանիս , և ամենայն կաղմածովք պատրաստ մինել ի նաւարկել : Հարցեալ թէ յու ուրեք արդեօք նաւարկիցէ , պատասխանի առնէր թէ Առ դիսն , աղօթս առնել զի բարիք մարդկան լինիցին : Եւ չստունդանէր գործել զգործ նաւագործութեանն :

Հանդերձեալ կազմեալ ըստ ամենայնի որպէս և առ հրաման՝ զկին և զորդիս և զկարեւոր բարեկամս ի ներքս մուծանէր : Ի հասանել ջրհեղեղին և վազվաղակի ցածնուլ՝ թըռչունս ինչ արձակէր (Նոյ.) և ի չգտանել նոյցա ուտել ինչ , և ոչ տեղի և դադար իշանելց՝ դարձեալ միւսանդամ առնոյր զնոսա ի նաւն . և յետ սակաւ ինչ աւուրց դարձեալ արձակէր այլ հաւս , և նոքա եւս միւսանդամ անդրէն ի նաւն դային՝ կաւով թաթախ զմագիլսն բերեալ : Ապա երրորդ անդամ արձակէր , և անդրէն միւսանդամ չգային ի նաւն : Յայնժամ իմացեալ (Նոյի) եթէ յայտնեալ բայցեալ է

երկիր՝ քակէր զկողմ մի ձեղուան նաւին, տեսանէր երթեալ յեցեալ զնաւն ի լեառն ինչ։ Ելանէր կնաւ և դստերը միով հանդերձ, և ճարտարապետաւ նաւին, և երկիր պագանէր յերկրի։ բագին կանգնէր և զոհ դից մատուցանէր, և այ- նուհետեւ չիք յաշաց լինէր նոքօք հանդերձ որք ընդ նմա- ի նաւէն ելանէին։ Եւ որք անդէն ի նաւին մնային և չելա- նէին ընդ նոյեանց, ելեալ յետոյ խնդրէին զնա, և յանուա- նէ շրջէին գոչէին կոչէին։ Նոյ չերեւէր այնուհետեւ նոցա, բայց ձայն բարբառոյ յօդոցն եկեալ պատուէր տայր՝ եթէ պարտ էր նոցա դիցապաշտու լինել, և եթէ ինքն վասն դիւ- ցապաշտութեանն երթեալ բնակիցէ ի բնակութիւն դիցն, և կնոջն նորա և դստեր և նաւապետին ի նոյն պատիւ վայե- լւ։ Եւ դուլ և պատուէր տայր նոցա երթալ միւսանգամ ի Բաբելոն, և թէ այնպէս ինչ հրամանք դիցն իցեն, նոցա երթալ ի Սիստարացւոց քաղաքէն փորել հանել զմատեանսն որ ծածկեալ կային անդ և տալ մարդկան։ Տեղին յորում վայրի ելեալ կային՝ Հայոց աշխարհն էր։

Նոցա լրւեալ զայն ամենայն՝ զոհս դից մատուցանեն, և ի հետիոտս ի Բաբելոն գնան։ Եւ ի նաւէն որ չոգաւ դա- դարեաց ի Հայու՝ և ցայժմ սակաւ ինչ մասն ի Կորդուացւոց Մերինն ի Հայոց աշխարհին մեալ նշխար ասեն, և ոմանց քե- րել բերել ի ծեփածոյ նաւին նաւթոյ՝ ի բժշկութիւն և ի ջըն- ջոց ցաւոց ինչ բժժանաց։»

Նոյն պատմութիւն այլ աղի յԱբէւթեանց

«Յետ որոյ այլք տիրեցին Քաղդէացւոց, և ապա Քսի- սութրոս (Նոյ,) որում Կոռնոս յառաջագոյն գուշակեաց լի- նել յաճախութիւն անձեւաց։ Հրաման տայ զմատեանս ա- մենայն յԱբեղ քաղաքի Սիստարացւոց թաքուցանել։ Եւ իբ- րեւ Սիսիթրոս զայն ի գլուխ հանեալ վճարէր, մինչդեռ ա- ռագաստ ճգեալ նաւարկել ի Հայս կամէին, յանկարծակի հասանէին նաւավարքն յԱստուծոյ։ Յերրորդ աւուր յորժամ անձրեւքն ցածնուին, արձակէր հաւս ինչ ի հաւուց, դէտ- ակն կալեալ եթէ կարիցեն զերկիր փարատեալ ի բազմութե- նէ ջուրցն տեսանել։ Եւ նոցա յածեալ ընդ անհուն համա-

տարած ծովն ծփանաց՝ չգտանէին ուրեք ոտից դադար .
անդրէն առ Սիսիթրոս յետս դարձեալ դիմէին : Եւ նորա
դադարեալ այլ եւս երիս աւուրս՝ դարձեալ արձակէր , և
եկեալ՝ կաւով թաթախ զմագիլսն բերէին : Եւ անդէն վաղ-
վաղակի դիքն զնա ի մարդկանէ հետակորոյս առնէին , և
նաւն երթեալ յաշխարհն Հայոց դադարէր , և ի փայտիցն
դեղ օգնականութեան բնակչաց աշխարհին պարզեւէր :

Վասն աշխարհի աշխատնեան

«Առաջինքն զօրութեամբ և յաղթանդամութեամբ յուլա-
ցեալք մինչեւ զդիսն եւս անդոսնել և յանպիտանութիւնս .
հատանել , սկսանէին զբարձրաբերձ զբուրդնն կանդնել որ
այժմ Բարեղոն կոչի , և իբրեւ մօտ յերկինս հասուցանէին
դիցն , այնուհետեւ հողմոց դից օգնական լեալ՝ մղէին և
յերկիր կործանէին զմենքենաւոր գործն անարեացն , և յա-
տակն կործանեալ Բաբելոն անուանէր : Յայն վայր միաշուրթն
համալեզուք էին , և ի դիցն լազմամրոխ խառնախօս Խը-
զրւըրտիւն ի միաբանեալսն եկեալ մոտանէր : Եւ յետ այնորիկ
կրողն և Տիտանն ի մարտ պատերազմի ընդ միմեանս բա-
խէին :

(Մատուցի յառաջ)

Ա. Մ. Դ.

ՔՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

Այսպէս ունելն կալուածոց , կամ , այլով բանիւ , ան-
շարժ ստացուածոց , գտեղի արծաթոյ՝ ցուցանէ եթէ երկիրն
էր տակաւին մեծաւ մասամբ յայնմ ի շինական հեշտ պար-
զութեան , յորում եգիտ զնա Քսենոփոն իբր երկերիւր ա-
մօք յառաջ քան զսկիզբն թագաւորութեանն Արշակունեաց :
Գլխաւոր պատճառ այսր նուազութեան դրամոց այն էր թե-
րեւս զի թագաւորաց Արշակունեաց չէր սովորութիւն , կամ
մանաւանդ իշխանութիւն , հատանելոյ առանձինն դահեկան
յետ շիջանելց յեղին Արտաքսիասայ , այն է թագաւորաց
սկզբան ժամանակին Արշակունեաց որ ունէին առանձին դա-
հեկանս , յորոց են որ հասեալ են մինչեւ առ մեղ : Յետ կո-

րուսանելոյ Երկրին զմիահեծան իշխանութիւնն , կամ յետ ստիպելոյ հարկանել հարկս Երկուց ազգաց մեծամեծաց դրացեաց , Հռոմայեցւոցն և Պարսից , հարկ էր , ըստ սովորութեան ժամանակին , կորուսանել և զիրաւունս հատանելոյ առանձին դահեկան՝ շատանալով ի կիր արկանել հռոմայեցի և պարսիկ դահեկանս : Զէ պարտ կարծել սակայն թէ յայս սակս Հայն էր յայնժամ հէք և գծուծ : Եթէ ճշմարիտ է զոր պատմէն յոյն զօրավարն ականատես , մին յառաջնորդաց անտի բիւրուն առ կրտսերն Կիւրոսիւ , Հայք ունէին ի տունս իւրեանց գետնափորս ոչ միայն կերակուր և ըմպելի առատ , այլ եւ օծանելիս անուշանուս : Դրամ չէր կարեւոր որչափ զարդիս նոյնչափ ի հնումն , մինչդեռ տիրէին փոխանակութիւն և բռնի աշխատութիւն : Վաճառականութիւն Տիւրոսի , ըստ Եղեկիելի (Թլ. Իէ.) , գէթ մեծաւ մասամբ , էր փոխանակութիւն : Մարդարէն , յետ յիշելոյ զազդս ազգաց և գործուածոց բերելոց ի վաճառ ի կողմանց կողմանց , ի կարքեդոնէ , ի Յունաց , ի տանէ Թորգումայ , ի Կըղզեաց անտի Միջերկրականին , ի Հրէաստանէ , յԱսորւոց , յԱրաբացւոց , յԵգիպտոսէ , ի Մարաց , արծաթ , ոսկի , պղինձ , անագ , կապար , անօթս պղնձիս , ձիս և ջորիս , փղոսկր , Երկին նարօտից , խունկ , մեղր , իւղ , գինի , ուղտ , խոյ , որոջ , իւղս անուշունս , ականս պատուականս , բեհեզզ , այլովքն հանդերձ , յաւելու . « Նւ Երթեւեկացն տայիր զվաճառս քո բազմացեալս յաղխամաղիսէ քումիշ : « Եղիսոսս առնոյր ոսկի , փղոսկր և գերիս յԵթովլիայ , խունկս՝ յԱրաբիայ , գինիս՝ ի Յունաց և ի Փիւնիկեցւոց , աղ՝ ի Մահարայ , և ինքն տայըր ընդ այնր ցորեան և այլ եւս նոյնպիսիս , և մանաւանդ Արաբիա կերաւիրէր միշտ ցորենով նորա » (Պաթըրձ . Տիեզ . Պոմ . Հտ . Ա . 59 :) Հրաշակերտք Եղիպտոսի և Ասորեստանի յորոց ոմանք կանդուն են , այլոց մնացորդք միայն կան , չկանգնեցան արծաթով : Յուրանք կամ բրդունք Եղիպտոսի շինեցան հացիւ և խատորով : Խոսրով կոտակ , որդի Տրդատայ Մեծի , ի տնկելն զանտառսն իւր զերկոսին՝ տայ հրաման սպարապետին իւրում Վաչէի « հանել խաշար յաշխարհէն բազում , և բերել զվայրենի կաղին մայրեաց , և

տնկել զայն յայրարատեան գաւառին » (Բուգ. Գ. Ը.):

Իսկ վասն կարգաց իրաւանց և արդարութեան չէ հաւանութեան թէ գոյին յայնժամ ի Հայս արդի ոճով օրինագիրք և ատեանք: Յայտնի է սակայն թէ չէին և չկարէին Մինել անծանօթ Հայոց գէթ գլխաւորքն և կարեւորագոյնք յընկերական կարգաց, որպիսի են իրաւունք կենաց և սեպհականութեան, ամուսնութիւն, տուրեւառ, այլովքն հանդերձ: Լեզր պատկեր է մոտաւոր և բարոյական զարգացման ազգաց, և տեսիլք մոտաց (գաղափարք) որոց նշանք են բանք՝ չկարեն առնուլ ծնունդ, եթէ իրք նշանակեալք նոքօք չեղեն կանխաւ ընտելացեալ, և իրը այն թէ դրոշմեալ ի բարս և ի սովորութիւնս ժողովրդեան: Արդ Հայ լեզուն ունի ի վաղուց անտի, յետ մտից քրիստոնէութեան մանաւանդ, զամենայն բանս որ նշանակեն զայլեւայլ աղերս կենաց և գործոց մարդկան, սկսեալ յառատնին կարգաց մինչեւ յընկերականն և ի քաղաքական: Հայերէնն ունի զանուանս պէսպէս աստիճանաց ազգականութեան, ոչ հարազատացն միայն, այլ եւ խորթոց. ընդ հօր և մօր և որդւոց՝ գիտէ և յօրայ և մօրու, խորթ և ուրիշու, որոց առաջինն յայտ առնէ զայն որ չէ հարազատ, և երկրորդն որ չէն ի նմին մօրէ. գիտէ և թայրաթոսս, այսինքն զորս ի խնամութենէ մերձաւորքն են, որպիսի են նուն և քենին, զոքանչ և սկեսուր, տալ և ներն և աներ: Խորէ և զհանգամանս կամ զպայման կենաց, որպէս զամուսնութիւն, զայրութիւն և զամուրութիւն: Գիտէ և տէր և ծառայ: Թէպէտ և չգոյին ի Հայս, որպէս յոմանս ի հին ազգաց, բաժանումն այն ժողովրդական զոր Եւրոպացիք սովոր են կոչել +ասո՞+, իրեւ առանձինն զոկք որոց չիք հաղորդութիւն մերձաւորութեան ընդ միմեանս, գոյր սակայն ազատ և շինական, այսինքն՝ հողատէր և մշակ, որ զայժմու Շէրֆն կամ զվարձակալ (Fermier) թուի յայտ առնել: Սեպուհն անուն յորմէ է սեպհականութիւն՝ էր յորջորջումն ազատորերոյ, այսինքն որդւոց նախարարական տոհմից, և նշանակէր զայն որ ունէր իրաւունս սեպհականութեան, այսինքն՝ ստանալոյ երկիր: Աեսլուհ անուան մեւս եւս ձեւ է սպայն, որ նշանակէր զիւ

նուոր, մանաւանդ հեծեալ: Ուստի դիւրինէ տեսանել եթէ ազատ մասն ժողովրդեան էր ի բնէ հողատէր և զինուոր, որպէս շինականն էր երկասէր և կամ աշխատող մասն (industriel;) այսինքն՝ մշակ, ձեռագէտ և թանգար: Ահա փառաւոր ազնուականութիւն առընթեր պատուաւոր քաղաքացութեան: Զիք հնար թէ չդոյին, եթէ ոչ օրէնք, գէթ պայմանք ի կարգել և ունել յակաստանի զաղերս հասարակաց կենաց որ ի վերոյն յիշեցան: Խորենացին թուր հաստատել ուրեք թէ կային այնպիսի պայմանք գրով: Ծերունի պատմիչն, անաշառ ի յանդիմանել զթերութիւնս ազգին, յետ մեղադիր լինելց հին Հայոց թէ անփոյթք էին ի թողուլ յիշատակս պատմութեան՝ յաւելու . «Այլ ասիցէ ոք արդեւք, վասն ոչ լինելց գիր և դպրութիւն ի ժամանակին, կամ վասն պէս պէս պատերազմաց որ կուռ զիմեանց կնի անհետ ի վերայ գային: Այլ ոչ արդարեւ այսոքիկ կարծեցեալ լինի, քանզի գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և գիր Պարսից և Յունաց, որով այժմ գիւղից և գաւռաց (այսինքն՝ անշարժ ստացուածոց,) և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց (իմա՝ ընտանեկան պայմանաց, որպէս ամուսնութեան, ժառանգութեան, և որ ի կարգին,) և հանուրց հակառակութեանց և դաշնաց (այն է պարտուց և փոխոց և այլ եւս պայմանաց տուրեւառիկ փոփոխմանց) այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեանն պայազատութիւն (այսինքն յաջորդութեան կամ գլխաւորութեան նախարարական տորմից և այլոց իրաւանց, թերեւս և պայմանաց որ ի մէջ նախարարութեանց իբրեւ տերանց և շինական մասին» (Խոր. Ա. Գ.): Թէ զընկերական կարգաց և զպատշաճից գոյր ճշգրիտ ընտրութիւն ի Հայս, առ այս ունիմք ի պատմութենէ իսկ վկայութիւն: Նշանաւոր է զոր ասէն Խորենացի, և աւելի մանր՝ Բուզանդ ի պատմութեան անդ Արշակաւանի: Բերցուք նախ զինուզանդայն . «Զայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն (Արշակ) դաստակերտ մի ի Կոդ գտառի: Եւ ետ հրաման ընդ ամենայն գաւառու իշխանութեան իւրոյ, և հրամայեաց կարգալ քարոզ ընդ ամենայն տեղիս

աշխարհացն , և զամենայն կողմանս գաւառացն լի առնէր հրամանաւն արքունի , զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի , եթէ ոք ումեք ուստեք ինչ վնասեալ իցէ , ամենեքեան եկեսցեն ի դաստակերտն զոր շինեաց : Եթէ արիւնահան ոք իցէ , կամ վնաս ումեք արարեալ իցէ , կամ զիին ուրուք տարեալ իցէ , կամ ոք զուրուք կարասի ունիցի , և ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ և եկեսցէ յայն տեղի , դատ և իրաւունք մի՛ լիցին : Իսկ եթէ ոք ումեք ինչ պարտիցի և որում պարտիցին դայցէ յայն տեղին , առանց դատի և իրաւանց կալցին զնա և ի դուրս տարցին : Իբրեւ ել հրամանն յարքայէն , ժողովեցան այնուհետեւ յայն տեղի ամենայն գողք և աւազակը , գանձահատք , զրկողք , յափշտակօղք , արիւնահանք և սպանօղք : Բազում կանայք զարս թողեալ , բազում արք զիւրեանց կանայս թողեալ և զայլոց կանայս առեալ , բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբռոնեալ , բազում աւանդառուք զաւանդս և զպահեստս բարձեալ փախուցեալք անդր անկանէին : Զի թէսէտ և կարի յոյժ բազմացաւ աղաղակն , դատ չկայր , և իրաւունք ումեք յարքունուստ ոչ ելանէին , վասն այսորիկ ամենայն մարդ հառաջելով վայէին թէ իրաւունք մեռան » (Բուզ. Դ. ծԲ.) : Զնյոն ասէ և Խորենացին , թէսէտ համառօտիւ ըստ իւրում ոճոյ . « Ի թիկանց կուսէ լերինն Մասեաց շինեաց (Արշակ) ձեռակերտ , ժողով մարդկան մեղաւորաց , և ետ հրաման , որ ոք անկեալ անդր բնակեսցէ , մի՛ լիցի ի վերայ նորա իրաւունք դատաստանի : Եւ նոյնժամայն ծովացեալ լցաւ մարդկութեամբ հովիտն ամենայն , քանզի աւանդառուք և սրարտականք և ծառայք և վնասակարք և գողք և սպանօղք և կնահանք և այլք այսպիսիք փախուցեալք անդր անկանէին , և ոչ կայր նոյցա այց և խնդիր » (Խոր. Գ. ի՛շ.) : Զէ ամենեւին հաւանութեան՝ թէ Արշակ եհան այնպիսի ինչ հրաման ի տէրութեան իւրում հրապարակաւ և յայտնի : Զայս եւս պարտ է դնել ի համարի զրագարտութեանց զորս պատմիչք մեր , առ կարի նախանձաւորութեան կրօնից , սովոր են կուտել ի վերայ աղատամիտ թագաւորաց և իշխանաց : Այսչափ միայն մարթ է ընդունել իբրեւ ճշմարիտ ի պատմութեան

անդ Արշակաւանի՝ թէ թերեւս գոյր ներողութիւն իմն կամ ազատութիւն ծառայից և այլոց որոց գտեալ յանցաւոր կամ մնասակար նախարարաց հակառակորդաց Արշակայ՝ դիմէին յԱրշակաւանն , որպէս գոյ յոմանս արդի տէրութեանց ազատութիւն , նա մանաւանդ պաշտպանութիւն իսկ , քաղաքական յանցաւորաց դիմելոց առ նոսաւ Զիարդ և իցէ , պատմութիւնն ցուցանէ եթէ եղծմունք ընկերական պայմանաց համարեալ էին յանցուած և ոճիր հակառակ իրաւանց և արդարութեան , և ասելն՝ « Դատ և իրաւունք մի լիցին , » յայտ առնէ եթէ սակս այնպիսի եղծմանց գոյին դատաստանք և պատիժք , ապա և դատաւորք և ատեանք ի պաշտօնէ և ընդ տեսչութեամբ վերին իրիք իշխանութեան : Զայս ակնարկէ բանն , « արքունուստ , » զոր յաւելու Բուզանդ . « Եւ իրաւունք ումեք յարգունուստ ոչ ելանէին : » Ապա հաւանութեան է թէ օրէնսդիր և դատաւոր ընդարձակ մտօք էր թագաւորն իբրեւ վերջին ատեան բողոքոյ , թերեւս և իւրաքանչիւր նախարար յիւրում երկրին : Զէ պարտ թողուլ առանց յիշտակութեան զնզնկայ նշանաւոր հատուածն . « Ընդէ՞ր օրէնք ի թագաւորաց դնիշին , և սաստք յիշխանաց , և պատիժք ի դատաւորաց . ոչ ապաքէն վասն կարձելց չարեացն : Եթէ բնութեամբ իցեն չարիքն , ոչ պարտի օրէնսդիրն օրէնս դնել , և ոչ իշխանն պատիժս ի վերայ չարագործին ածել : Տեսանեմք թէ թագաւորն զիւրոց օրինաց վրէժս պահանջէ , և պահանջմամբ վրիժուցն զվասան կարձէ . և դատաւորն զգողն և զաւազակն պրկէ և քերէ վասն զվասակարութիւնն ի միջոց բառնալց . և հայր զորդի դժնեայ մահապարտեալ՝ դատաւորաց մատնէ , և այլքն ամենեքեան զիւրաքանչիւր զանձնիւր զանարգանաց վրէժս պահանջեն կամ անձամբ , կամ իշխանօք » (Եղն. Ա. ԺԵ.) :

Եղնիկ խօսի Հայոց , և խօսի իբրեւ զվաղուց ընդելական և զծանօթ իրաց , թէ գոյին դատաստանք և պատիժք ի ձեռն օրէնսդիր իշխանաց և դատաւորաց . ցուցանէ եւս թէ պատիժքն էին , ըստ ոգւոյ ժամանակին , խիստք և մարմնաւորք :

(Մատուսցի յատաջ)

Ա. Մ. Գ.

Քաղուածոյք ինչ յօրինաց Հռովմայեցւոց անկան յաւուրսս յայսոսիկ ի ձեռս մեր , յայնցանէ որ յանուանեալ Մատեանն նորոց գտանին , գործ Յուստինիանոսի կայսեր , հանդերձ այլով եւս մասամբ օրինաց որ ի թէոդոս կայսերէ կարգեալ հաստատեալ են : Արժան համարեցաք թարգմանել զքաղուածոյսդ ի հայ բարբառ , վասն կարեւոր և քրքրիչ տեղեկութեանցն զորս տան մեզ զին ինչ սովորութեանց Հայոց , զպէսպէս բաժանմանէ երկրին նոցա և զկարգաց վարչութեան որ այնչափ ստէպ փոփոխէին ըստ դիալաց ժամանակին : Մեք զլատինական բնագրին զիետ գնացաք , և զգաղիականն որ ի հանդիպոյ դրոշմեալ է և յորում ինչ ինչ վրիպածս թարգմանութեան նշմարէաք՝ թողաք ի միակողմն :

ՎԱՍՆ ՅՈՐԻՆՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ , ՎԱՐՉԱԿԱՆ
ԵՒ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՅ ԱՇԽԱՌՀԻՆ ՀԱՑՈՅ
Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՅՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ԿԱՅՍԵՐ

ՄԱՏԵԱՆ ՆՈՐՈՅ ԻԱ . — ՀԱՏԱԾ Է .

Թէ պարու և Հայոց զներ երեալ ըրբնաց Հռովմայեցւոց

Յուստիանոս կայսր առ Ակակիոս , հոյակապ փոխանակ բգեշխի Հայաստան աշխարհի

ՅԱՐԱՉԱԲԱՆ

Կամ եղեւ մեզ տալ աշխարհին Հայոց օրէնս ընտիրս ,
զի մի՛ զատեալ որոշեսցի յայլոց աշխարհաց մերոյ ընկերհաշտութեան , և ընորհեցաք նոցա գործակալս հոսվմայեցիս , և խլեալ զին հին սովորութիւնս ինչ նոցա՝ ընդելացուցաք զնոսա բուսոյ բարուց Հռովմայեցւոց . և պատուէր հրամանի եւս տուաք զի մի՛ այլ օրէնս ունիցին , բայց զՀռովմայեցւոցն : Պարտ համարեցաք առանձինն օրինօք ջնջել զայն յորում չարաշար գտանին նոքա պարտաւորեալք , այն ինքն է թէ արք ժառանգեն ի ծնողաց , յեղբարց և յայլ համօրէն ազգականաց , իսկ կանայք ոչ : Պատուէր տուաք զի մի՛ ա-

մուսնացուայեն գկուսանս առանց պաշտատականի, և մի՛ տացեն զնոսա գնոց գնել արանց որ առնլոց իցեն զնոսա կնութեան : Այս բարք խուժադուժք կալեալ տիրեն մինչեւ ցայսօր առ նոսա . և ոչ նոցա միայն են գազանաբարոյ այս բարք , այլ և այլոց ազգաց հեթանոսաց որ անարդեն այնպէս զբնութիւն և առնեն նախատինս ազգի կանանց , իբրեւ թէ չիցեն նոքա արարածք Աստուծոյ և չունիցին ինչ մասն յորդեծնութեան , և թէ չիցէ պարտ ամենեւին ի պատուի ունել զնոսա և ի շքի՝ իբրեւ անարդ և արհամարհ ինչ արարածս :

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Այսու նուիրական օրինօք հաստատեմք զի նոյն եւ միլիցի բաժին ժառանդութեան կանանց առ Հայս , որպէս առ մեղն է , և մի լինիցին խալիք ի մէջ արուի և խգի , այլ՝ որպէս սահմանեալ է յօրէնս մեր զի իւրաքանչիւր ոք ժառանդէ ի ծնողաց , որպէս ի հօրէ և ի մօրէ , և ի հեռագոյն աստիճանի՝ ի հաւէ և ի հանւոյ , և կամ յորոց յետոյն գայցեն , որպէս յորդուոյ և ի դստերէ , նոյնն և առ Հայս եղիցի . և օրէնք Հայոց այլագունակը մի լինիցին յօրինաց անսաի Հռովմայեցոց : Քանզի եթէ մասն են նորքա ընկերհաշտութեան մերոյ և հնազանդեալ են մեղ իբրեւ զայլ ազգս և վայելեն յամենայնի որ ինչ բարիկն են առ մեղ , մի եւս կանայք միայն գրիպեսցին յարդարութենէ օրինաց որ առ մեղ են . այլ ամենայն օրէնք մեր նոյն և հասարակաց եղիցին ամենեցուն , եթէ՛ այնոքիկ զոր ընկալեալ ի նախնեաց՝ գումարեալ ամփոփեցաք ի հրահանդս (instituta) և ի քաղուածոյս (digesta,) և եթէ՛ այնոքիկ որ գրումեալ են ի սահմանադրութիւնս կայսերականս՝ մեր և ինքնակալացն որ յառաջ քան զմեղ էին :

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Հրաման տամք և պատուիրեմք զի այդ ամենայն ընկալեալ պահեսցի ընդ բնաւ ժամանակս , սկիզբն արարեալ ի չորբեքտասաներորդ ինդիկտիոնէ աստի յորում գրեմք զօրէնս զայս : Քանզի ելանել ի հեռագոյն ժամանակս և զինսն խու-

զեալ վեր ի վայր առնել չփոթ է մանաւանդ քան օրէնսդրութիւն։ Այլ, որպէս յառաջագոյն ասացաք, ի ժամանակէ աստի չորեքտասաներորդ ինդիկտիոնի և այսր հասարակորդ և նման եղիցին բաժինք ժառանգութեան։ և եթէ դէպ լինիցի ժառանգել ինչ ինչ՝ զինչ և իցէ պատճառաւ, ընդ այր և ընդ կին հասարակ եղիցին բաժինքն։ Իսկ որ ինչ յառաջագոյն կատարեալ իցէ յինչս և յարարս ընտանեաց՝ զայն թողումք զի կացցէ մնացէ յառաջին պայմանի իւրում, և յայնժամ կանայք ոչ ունիցին մասն ի կալուածս և յինչս որ բաժանեալ իցեն մինչեւ ցերեքտասաներորդ ինդիկտիոն։ Սակայն ըստ այդ նշանակեալ կէտ ժամանակի և այսր, այսինքն ի չորեքտասաներորդ ինդիկտիոնի՝ հրամայեմք զի որ ինչ սահմանեալ է ի մէնջ, կացցէ ի զօրութեան և հաստի։

ՎԵՐՉԱԲԱՆ

Մեծութիւն քո և որ զկնի քո առնլոց իցեն ի ձեռն զիշխանութիւնդ զայդ՝ փոյթ կալջիք պահելոյ և ի կիր արկանելոյ զոր ինչ մեր նուիրական օրինօքս այսոքիւք սահմանեալ է։

Տուեալ ի հնդետասաներորդում աւուր Ասլրիւ ամսոյ։ — Կոստանդինոպոլիս— Յետ հիւպատութեան Բելիսարի (536)։

ՀՐՈՎԱՐՏԱԿ Դ.

Վասն ժառանգութեան առ Հայու

Ազատեալս կամիմք զՀայս ի կին ինչ և դժնդակ սովորութենէ և ընդ օրինօք մերովք գրաւեալս յամենայնի, և չնորհել եւս նոցա հաւասարութիւն իրաւանց որ լինիցի նոցա առ ի պատիւ։

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Այն ինչ աղդ լիեալ մեզ թէ գոն առ Հայս օրէնք ինչ խուժդուժք և թշնամանալիցք որ չեն արժանի ոչ Հռովմայեցոց և ոչ արդարութեան մերոյ ընկերհաշտութեան, այս ինքն է թէ արք միայն առնուն բաժին ժառանգութեան ի

ծնողաց իւրեանց և ոչ կանայք, հրաման տամք զի ըստ օրինացս այսոցիկ նուիրականաց զոր առաքեմք առ Մեծութիւն քո, բաժինք ժառանգութեան հասարակ լինիցին, և որ ինչ սահմանեալն է յօրէնս Հռովմայեցոց եթէ վասն արանց և եթէ՛ վասն կանանց՝ ի կիր արկցի և ի Հայաստան աշխարհի ։ Վասն այնորիկ առաքեցաք զօրէնս մեր անդր՝ զի զաջ իւրեանց յառեալ ի նոսա՝ վարս նոցին յանկագոյնս ընծայեցուցեն։

Յօր. 1. — Քանզի չէ պարտ, չէ արժան զյառաջագոյն դիպեալսն խուզեալ որոնել՝ զայս ինչ կարգեալ սահմանեմք զի օրինացդ այդոցիկ զօրութիւն և ազդեցութիւն ի սկզբանէ անտի պաշտօնասէր մերոյ տէրութեան կարգեսցի; և անտի և այսր ժառանգութիւնք հանգոյն նորոց օրինաց բաժանեսցին։ Իսկ եթէ ոմանց կարգեալ իցէ ինչ յառաջագոյն և դաշինս եւս եղեալ ընդ միմեանս, հրամայեմք զի այն ի զօրութեան և ի հաստի կացցէ և մի բնաւ փոխեսցի։

Յօր. 2. — Ի վերագոյն յիշեալ ժամանակէ անտի և այսր կամիմք զկանայս բաժանորդս լինել կալուածոց որ հայրենականքն կոչին։ Սակայն եթէ գտանիցին ոմանք որ ժառանգս կացուցանիցեն գլուտերս իւրեանց որ չունին իրաւունս ժառանգելոյ կտակաւ, բաժանորդ լիցին ժառանգութեան կալուածոցն հայրենեաց՝ նոքա և որ ի նոցանէ ծնանիցին։

ՎԵՐՉԱԲԱՆ

Որ ինչ հաճոյ թուեցաւ մեզ և նուիրական օրինօքս այսոքիւք սահմանեալ կարգեցաւ, զայն փոյթ կալցի Մեծութիւն քո յարդիւնս ածել և պահել, որպէս զի օրէնք մեր ոյժ և հաստատութիւն ունիցին ընդ բնաւ տեղիս. և օրէնքս այսոքիկ սկսանիցին, որպէս կանխագոյն ասացաք, ի սկզբանէ մերոյ տէրութեան և յերկարեալ ձգեսցին ցընաւ ժամանակս և ունիցին ոյժ և զօրութիւն յընկերհաշտութեան մերում, և յամենեցունց յարգեալ մեծարեալ պահեսցին։

Տուեալ ի տասներորդում աւուր Աւգոստոս ամսեան։
— ի հիւպատոսութեան Բելիսարի (535)։

ՄԱՏԵԱՆ ՆՈՐՈՅ ԼԱ. — ՀԱՏՈՒԾ Ժ.

Վասն բաժանման է օրու կուսակալունիւն Հայութան ավետին:

Յուստինիանոս Կայսր՝ առ Յովհաննէս, քաջանուն և հոյակապ երկիցս տեսուչ նուիրական պրետորեան Ատենի յԱրեւելս և կանխագոյն Բդեաշխ և Պատրիկ:

ՅԱՌԱՋԱՐԱՆ

Որ առանց օգտակարութեան և խառն ի խուռն ընկեցեալ ինչ ուրեք իցէ՝ ոչ նոյն և մի երեւեսցի, յորժամյարդար և ի վայելուչ կարգ ուղղութեան ածիցի, այլ ամենեւին այլակերպ և զատ լինիցի. որ տագեղն է՝ գեղեցիկ երեւեսցի, որ անզարդն է՝ պճնեալ և զարդարուն թուեցի, և որ խառնակն իցէ և անկարգ՝ յարդարեալ և բարեկարգ համարեսցի: Ի դմին իրի թերի գտանեմք զաշխարհն Հայոց և սիսալաւոր, և կամմիք շրջել ածել զնա ի միատարր միաձայն դաշնակութիւն, և հրամանօք գեղեցիկս սահմանելովք տալ նմա ոյժ պնդութեան և նեցուկ և կարգ վայելուչ:

Գ Լ Ո Ւ Խ Ա.

ԶՀայաստան աշխարհ ի չորս բաժանեմք . մին է ներքին, որոյ մայրաքաղաք որ Բասանէսն կոչէր յառաջագոյն կամ Լեւոնդոպոլիս՝ մերով պաշտօնասէր անուամբ պատուեալ է . չնորհեալ եւս է մեր նմա Անթիւպատոսութիւն, որում և Ակալիոս, այր փառաւոր և քաջանուն, եկաց երբեմն յանձանձիչ: Կուսակալն զոր տամք նմա՝ ունիցի զաստիճան Մեծարելոյ (*) և զամենայն շուք և պատիւ որ վայելեն այնուատինանի: Քանզի պատմուձան փոխանակի բգեշխի չնորհեցաք նմա ագանել, և սահմանեալ կարգեցաք զի ունիցի որ ինչ անկ և վայել իցէ այնմ իշխանութեան: Քաղաքս տուաք նմա զԹէոդոսիոպոլիս զոր ունէրն կանխագոյն, զՍատալա,

(*) Առ կայսերօք Հռովմայեցոց անդամբ ծերակուտին յերիս կարգս բաժանէին . Ա. Անդամբ առաջին կարգին անուանեալ էին Մեծափառ (illustris), Բ. Անդամբ երկրորդ կարգին յորջորշին Մեծարելի (spectabilis,) եւ Անդամբ երրորդ կարգին երեւելի (clarissimus) անուանէին :

զՆիկոպոլիս և զԿոլոնիա զոր հանեալ զատուցանեմք յառաջին անուանեալ Հայոց , և դարձեալ զԾրապեսոնտ և զԿերասոնտ որ պատկանին Պոնտոսի Պոլեմոնիաք կոչեցելոյ : Զոմանս ի քաղաքաց աստի զատեալ որոշեցաք յիշխանութենէ Երեւելոյ ուրուք կուսակալի և զոմանս յայլոյ ուրումն Մեծարելոյ . և այսպէս յօրինեալ յարդարեցաք զգաւառդ եւթն քաղաքօք և նոցա արուարձանեօք :

Յօր. 1. — Յերկրորդում վայրի եղաք՝ որ Առաջին Հայքն կոչէին յառաջագոյն . յորում քաղաքն Սեբաստիա ունի զառաջին գլխաւոր տեղին . և տուաք նմա զՍեբաստոպոլիս զոր և կանխագոյնն ունէր , և զԿոմանա յանուանելոյ Պոնտոսէ Պոլեմոնիաքայ և զՁելա ի Հելլենոպոնտէ և զՔրիսու . և յարդարեցաք զգաւառդ հինգ քաղաքօք և զՎերակացութիւն նորա թողաք յառաջնում անդ կերպարանս , և կուսակալին նորա չուամք անուն մեծագոյն , այլ զոր ունէրն՝ զայն թողումք նմա :

Յօր. 2. — Երրորդ Հայս լինել սահմանեմք որ Երկրորդն կոչէր յառաջագոյն . յորում Մելիտինէ , քաղաք հին և հոյակապ , ունի զգլիսաւոր տեղին , և շինեալ է ի գեղեցիկ վայրի և ընդ պատուական երկնիւք , ոչ կարի ի բացեաց յափանց Եփրատայ : Զայդ գաւառ պատշաճ համարիմք ընդարձակեալ մեծացուցանել և տալ նմա կուսակալ Մեծարելի , որոյ կոմի Ցուստինիանենի (*) անուն իցէ , և տալ նմա թոշակս եւթն հարիւր դահեկանաց ոսկւոյ , և աթոռակլի նորա եւթանասուն և երկուս դահեկանս ոսկւոյ , և դրան ատենի նորա վաթսուն դահեկանս ոսկւոյ , և զայլ ամենայն ինչ որ աթոռոյն այնմիկ անկ և պատշաճ իցէ : Որ Երբեմն հարկահանքն կոչէին՝ զործակալք անուանեսցին այսուհետեւ և դարձեալ հանելոյ զհարկս աշխարհին պատկառ կայցեն , և ըմբոշխանեալ վայելեսցեն յամենայնի զոր ունէին յառաջագոյն : Քաղաքս տամք նմա զԱրկա , զԱրքիսոն , զԱրիարաթիա և զմեւս այլ կոմանա (զոր և Քերուսա կոչեն) և զԿուկուսոն , զորս ունէր և յառաջագոյն . քանզի և յայնժամ վեց քաղաքք էին ի նմա :

(*) Comes Justinianus, կոմս Ցուստինիանեան :

Յօդ. Յ. — Սահմանեալ հաստատեմք և զջորրորդ Հայս
որ չէր յառաջադոյն ի գաւառի կերպարանս ածեալ . այլ էին
անդ բազմակոյտ ժողով խուժուժ ազգաց որ անուանեալ
կոչին Ծոփիք , Անձիտ , Հաշտեանք , Բալահովիտ , և նուաճեալ
էին ընդ ձեռամք սատրապետաց : Սակայն այդր իշխանու-
թեան անուն ոչ հռովմայեցի է և ոչ ի մերոց նախնեաց ըն-
կալեալ , այլ օտարուոի է և եկամուտ մուծեալ յայլմէ տէ-
րութենէ : Կամ եղեւ մեզ շնորհել նմա զկերպարանս քաղա-
քային իշխանութեան , հրաման տուեալ զի պաշտօնեայ քա-
ղաքային լինիցի Կուսակակալն . և քաղաք տուաք նմա զՄար-
տիրոսաց քաղաքն և զրերդն Կիթարիսոն (Կթոիծ) . և կար-
դեցաք մընպէս զի Կուսակալն ի սովորական կարգէ հիւլա-
տոսաց եղիցի . իսկ չորից աշխարհաց Հայաստան Երկրին
Կուսակալք Մեծարելիք Երկուք իցեն , այս ինքն՝ փոխանակ
բդեշխի միոյն իցէ և կոմս միւսոյն . որ Առաջին Հայոց վե-
րակացուն իցէ , փոխանակ բդեշխի լինիցի , և որ Երրորդն
Հայոց յանձնանձիչ՝ կոմս եղիցի . իսկ Երկրորդ և Զորրորդ
Հայոց սովորական Հիւպատոսք իցեն : Եւ քանզի ամենայն
փութով սահմանեցաք զի թոշակք հինգ հարիւր դահեկա-
նաց ուկոյ ոչ միայն այդմ Երջանիկ քաղաքին լինիցին , այլ
և դրան իշխանութեան Մեծարելեաց որ մօտաւորքն են .
ապա և զայս եւս հաստատեմք զի թոշակքն փոխանակ բդեշ-
խին Առաջին Հայոց՝ ի Մերաստիայ որ յԵրկրորդ Հայս , տա-
ցին . և Կոմսին Երրորդ Հայոց որ ի Մելիտինէ , մինչեւ ցնշա-
նակեալ գումարն , ի Զորրորդ Հայոց մատակարարեսցին :

Գ Լ Ո Խ Խ Բ .

Արդ յետ զայդ ամենայն կարգելոյ զայս օրինակ , հարկ
եղեւ տալ նմա և զգինուորական գլխաւորութիւն , որպէս զի
որ ի կողմանս յայնոսիկ սահմանեալ տեղակալ զօրքն իցեն՝
հնազանդ լինիցին նմա , և ունիցի իշխանութիւն , իբրեւ
գլուխ և պետ , կոչելոյ զնոսա յանուանէ և քննելոյ զվարս
նոցա և բաշխելոյ զուոճիկս և զյանցաւորսն պատժելոյ . և
թէ մի տացէ թոյլ զօրականին կոչուածել լիկել զհպատակս մեր .
և եթէ ծանրագոյնս ինչ ոք յանցանիցէ Երբեք , դատեսցի

զդատաստան նորա , թէպէտ և զինուոր իցէ . հուսկ ուրեմն իշխան լիցի գործել զամենայն զոր զինուորական իշխանութեանց հրաման տուեալ է մեր առնել : Եւ որպէս ընդ լծով իշխանութեան հնազանդ արարաք զջօրս՝ Կոմին իսաւրիայ և Պակատեանն Փոխւգիայ , նաեւ Պրետորաց Լիկաւոնիայ , Պիսիդիայ և Թրակիայ , նոյնպէս համարձակ լիցի նմա ոչ միայն զքաղաքային գործս յանձնանձել , այլ և իշխանութիւն ունել և հրամանատարութիւն ի վերայ գօրաց . և զի յարգեալ մեծարեսցի ի զօրաց անտի և ի բնաւ հեթանոսաց և արասցէ զոր ինչ զինուորական իշխանութեանց անկ և դիմող իցէ առնել : Նա և փոյթ յանձին կալցի զի մի՛ ոճիր ինչ ի գաւառուն գործեսցի , և եթէ դէպք ինչ դիպեսցին ; անդէն պատիժս պատուհասի ի վերայ յանցանելեացն հասուցէ : Յայսմ իշխանութենէ նորա ոչ զոք կամիմք ի գաւառիդ աղաստ կացուցանել , ոչ զայր սոսկագոյն , ոչ զզինուոր և ոչ զծառայ եկ որ յարեալ իցէ ի գործ սպասու կալուածոց արքունի : Քանզի կամիմք թէ մի և մշտնշենուոր խաղաղութիւն իցէ ի մէջ համօրէն հպատակաց մերոց . զի չէ մեր օրէնս խտրութեան տուեալ՝ ըստ այլակերպութեան անձանց :

ՎԵՐՉԱԲԱՆ

Զոր ինչ միանդամ հաճոյ եղեւ մեզ սահմանել ի բաժանմանդ յայդմիկ աշխարհին Հայոց ի չորս կուսակալութիւնս , մանաւանդ ի սակս Երրորդ Հայոց , ոյր վասն և զայս օրէնս տամք , փոյթ կալցի Մեծութիւն քո ձեռն ի գործ արարեալ կատարել ընդ բնաւ ժամանակս , և զթոշակսն զոր կարգեմք՝ ամ ըստ ամէ բաշխել , և օգնականութեամբ քոյոց ընկերաց յուրոյն առանձինն տոմարս դրոշմեալ նշանակել :

Տուեալ ի հնդեւտասաներորդում աւուր Ապրիլ ամսոյ . — Կոստանդինոպոլիս . — Յետ հիւպատոսութեան Բելիսարի (536) :

ՄԱՏԵԱՆ ՆՈՐՈՅ Ի. — ՀԱՏԱԾ Է. ԳԼ. Ա. Գ.

Յուստինիանոս կայսր՝ առ Յովհաննէս փառաւոր և
քաջանուն Տեսուն Տեսուն Պրետորեան ատենի
և կանխագոյն Բդեաշխ և Պատրիկ

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Թէ պարու է մեայն դրան պաշտօնելց Կուռասկալին մէջամասին լինել
է ժողով կոչմանց է դատաստան

Հաճոյ թուեցաւ պաշտօնէից քոյ և պաշտօնէից Գանձապահին մերոյ և ձեզ երկոցունցդ ի գլխովին, որպէս և մեզ իսկ արդար և ուղիղ թուէր, զոր ինչ հաստատել կամ եղեւ մեղ վասն միջամուխ լինելոյ միայն դրան պաշտօնէից Մեծութեան քոյ ի գործս կոչմանց յատեան, որպէս սովորութիւնն էր յառաջագոյն։ Ամենայնի որ ի նուիրական ատենի անդ առնիցի՝ առաջիկայ իցէ քաջանուն Գանձապահն մեր և խելամուտ և հաղորդ ամենայն գործոց որ գործիցին։

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Նոյն և վասն փոխանակի բդեշխի Հայոց աշխարհին, որ յառաջագոյն գաւառ էր ընդ հրամանատարութեամբ սովորական կուսակալի, զոր այժմ, առանց ինչ յաւելոյ, փոխեմք յիշխանութիւն փոխանակի բդեշխի։ Յորժամ դատ ինչ կամ բողոք դէպ լինիցի ուստեք, դրան պաշտօնեայք Մեծութեան քոյ լինիցին նուիրակը ի կոչել ի դատաստան։ զի ամենայն դատ կամ բողոք, որպէս ասացաք, ի նուիրական ատեան անդր տանելի է։ Սակայն դրան պաշտօնեայք քո փոյթ յանձինս կալցին վասն դատաստանական գործոց, որպէս յառաջագոյն իսկ էր սովորութիւն, մինչդեռ սովորական պաշտօնէից կերպարանք էին նոցա և չէին ի բարձրագոյն կարգ ամբարձեալ։

Տուեալ ի հնդետասաներորդում աւուր Ապրիլ ամառ . — Կոստանդինոպոլիս . — Յետ հիւպատոսութեան Բելիսարի (536)։

ՄԱՏԵԱՆ ՆՈՐՈՅ Հ. — ՀԱՏԱԾ Բ.

Յուստինիանոս Կայսր՝ առ Յովհաննէս կրկին Տեսուչ
Պրետորեան ատենի, Բդեալիս և Պատրիկ

Մանաւունիւն զմուշակաց ըստ առաջ է պաշտօնէից իւրածանչէր
Տեսութեանց կարգելոց է մենչ

Յօդ. 22. — Ի կուսակալէն Երկրորդ Հայոց, Երից Մեծարելի Նոտարաց նուիրական Սենեկին՝ 9 դահեկանք ոսկւոյ.
— Առաջնոյն Երեւելի հրամանատարաց նոտարաց՝ 24 դահեկանք ոսկւոյ.
— 0գնականին նորա՝ 3 դահեկանք ոսկւոյ.
— Եւ դրան պաշտօնէից հոյակապ կուսակալաց՝ 40 դահեկանք ոսկւոյ առ ի վայելս:

Յօդ. 43. — Ի կուսակալէն Առաջին Հայոց, Երից Մեծարելի Նոտարաց նուիրական Սենեկին՝ 9 դահեկանք ոսկւոյ.
— Առաջնոյն Երեւելի հրամանատարաց նոտարաց՝ 15 դահեկանք ոսկւոյ.
— 0գնականին նորա՝ 3 դահեկանք ոսկւոյ.
— Եւ դրան պաշտօնէից հոյակապ կուսակալաց՝ 30 դահեկանք ոսկւոյ առ ի վայելս:

ՄԱՏԵԱՆ ՕՐԻՆԱՅ ԹԻՌՈՒՈՍԻ. ԳԻՐՔ ԺԱ.
ՀԱՏԱԾ Ա.

Վան հաբեաց և որոց

Սահմանադրութիւն է Մեծին կոստանդիանոսի զի մի
ումեք տացի ազատութիւն ի հարկաց, բայց ի գոյից ինչ և
յանձանց ոմանց

Կոստանդիանոս Կայսր՝ առ Պրովիննոս

Բաց ի մերոց ուրոյն գոյից և ի կաթողիկէ եկեղեցեաց
և ի տանէն Եւսեբիայ, բարեաց յիշատակաց արժանուոյ առն
և կանխագոյն Բդեշմի և հրամանատարի այրուձիոյն և հետեւակաց,
և ի տանէն Արշակայ, արքային Հայոց, մի՛ ոք
օգտեսցի ի հարկաց և ի հասից Տէրութեան մերոյ: Քանզի և
Դատիանոս, այր քաջանուն Երեւելի և Պատրիկ, որ Երեւեմն
զշնորհս զայս (ապահարկի) ընկալեալ էր, այնչափ
ժտութեամբ խնդրէր առնուլ հանել զայն յինքենէ, որչափ

այլք հետամուտ լիեալ իսնդրեն հասանել նմա : Վասն այնորիկ պարտին ամենեքեան զգոյշ լինել՝ զի մի՛ ինչ առաւել հարկս պահանջեսցեն քան զայն զոր մերով ձեռամբ դրոշմեալ կարգեալ եմք ի գիրս հարկաց : Եւ եթէ տեսուչ ոք կամ կուսակալ գաւառի իրիք թողուցու ումեք զման ինչ պարտուց հարկաց , ինքն անձին տուժեսցի ի գոյից իւրոց :

Տուեալ ի հնդետասաներորդում աւուր Յուլիս ամսոյ . — Կոստանդինոպոլիս . — Ի հիւպատոսութեան Կոստանդեայ և Լիլինեայ (315) :

ՄԱՏԵԱՆ ՕՐԻՆԱՅ ԹԷՇՈՒԾԻ . ԳԻՒՔ ԺԲ. ՀԱՏԱԾ Զ.

Վասն հարկանաւոց և լիրակացուաց

Կայսերք Վաղենտինիանոս , Թէոդոս և Արկադիոս՝
առ Կինեգիս Կուսակալ և Պատրիկ

Հրաման տամք դրուանս պղնձեայս կամ քարեղէնս և քսեսոս և կշխու դնել յամենայն կայի և յամենայն քաղաքս , որպէս զի իւրաքանչիւր ոք ի հարկատուաց , ունելով զշափսդ զայդոսիկ ընդ աչօք գիտասցէ զոր ինչ տալոցն իցէ հարկահանաց : Եւ եթէ ոք ի հարկահանաց ըստ կանոնեալ սահման դրուանաց , քսեստից և կշոց անցանել ժտեսցի , զանձն պարտաւորեալ գիտասցէ հատուցանելց զվրէժ պատուհասի յանցանացն : Բնաշինջ անհետ արարեալ որ ինչ մինչեւ ցայսօր հակառակ շահի օգտութեան ժողովրդոց գործէր՝ հրամայեմք զի յիսներորդ մասն ցորենոյ՝ տացի հարկահանաց , քառասներորդ մասն գարւոյ և քսաներորդ մասն գինւոյ և ճարպի խոզենւոյ : Դրգեալք ի գթոյ մարդասիրութենէ՝ հրաման տամք զի յաշխարհին Հայոց , վասն բացաձիգ հեռաւորութեանն , քառասներորդ մասն ցորենոյ և գարւոյ և հընգետասաներորդ մասն գինւոյ և ճարպի խոզենւոյ հատուցի հարկահանաց :

Տուեալ ի չորրորդում աւուր Դեկտեմբեր ամսեան . — Կոստանդինոպոլիս — Ի հիւպատոսութեան Ոնորիոսի և Եւոտեայ (386) :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՆՔ ԶՀՈՅ ԼԵԶՈՒԵ

Ա. Պ. — Մինչդեռ այդշափ խիթաս գու , բարեկամ , և տագնապիս և ընդ քիրտն մտանես , զի մի մեղանչիցես ընդդէմ կանոնաց հաստատելոց ի մերոց նախնեաց և հակառակ բարւոք ճաշակի որ ի նոյցա գիրան միայն , ասես , նշմարի , ես զբազում տեսանեմ զի յախուռն , համարձակ և առանց փոյթ ինչ առնենք զկանոնացդ՝ գրեն որպէս զիարդ անկանին ընդ գրչաւ նոցա բանքն : Արդ՝ մի ինչ գայ ի միտս իմ . կամ դուք միայն էք հայերենագէտք (հայկաբանք .) և հակառակորդքն ձեր՝ ոչ , և կամ հմուտք են և նոքա և տեղեակք բազում այլ հանգամանաց լեզուին զորս դուք ոչ գիտէք , և այդ ամենայն բանք ձեր բաջաղանք են լոկ : Քանզի նշմարտութիւն ի մի կողմն եւեթ գտանի . չէ մարթ լինել նմա յերկոսին կողմանս միանգամայն :

Ա. Գ. — Այս , էին նոքա հայերենագէտք , մինչդեռ չէին այլք ի միջի :

Ա. Պ. — Ապա ուրեմն՝ որ հայերենագէտքն էին երբեմն , ոչ եւս են հայերենագէտք այսօր :

Ա. Գ. — Յերկարագոյն ճառս պարտ է մեղ մտանել այժմ առ ի մեկնել զայդ ամենայն և հաւանեցուցանել զմիտս քո պղտորեալս : Ապականութեանն մուծելոյ յանդին և ի պատուական լեզու Մեորպեան մատենագրութեան , որ երթայր և անէր ի դարէ ի դար , զառաջին թումբն արկանէր ընդդէմ երանելի այրն Մլսիթար . յայնժամ ի դոյն գործ սատար լինէին նմա և աշակերտքն նորա : Ապայն որ մինչեւ ցայն վայր գայոն էր և տիղմ և նեխ՝ դառնայր լինէր երկաթ կամ պղինձ , բայց ոչ այլ ինչ առաւել : Քանզի ի սկզբ բան անդ գիտութիւնն օրինաց և ոգւոյ լեզուին , նա եւ կանոնաց իսկ գպրութեան , հարեւանցի իմն էր և յոյժ թերակատար : Սնապարծ հպարտութիւնն վասն առաջնոյ այսր

յաղթութեան՝ արբեցուցեալ զմիտս չտայր թոյլ ի խորս անդր լեզուին միջամուխ լինել և խիլ արկեալ որոնել զանգին գանձսն զոր բարբարոսիկ դարքն յետինք անկետ արարեալ էին . և որ ինչ վարկապարազին էր և կեղծ և սեթեւեթեալ ի ցոյցս միայն և առ ականէ տգէտ և անուսումն մարդկան ժամանակին՝ այն ի հրապարակ ելեալ պատուէր : Թէպէտ և ի մէջ կոյս դարուս այսորիկ ելին արք հանճարեղք, զգօնք, խուզարկուք, անհնարին մտադիրք, հետահանք ճշմարտութեան, և եղին մատնացոյց առաջի Հայ աշխարհի զճշմարիտն ոգի և զնարազատ բնակաւոր պայմանս կազմածոյ Հայերէն լեզուի, սակայն պնդեալ յամառեալ առաջինքն ի միտս իւրեանց չառին յանձն զիջանել և ձայնին ճշմարտութեան դնել ունկն :

Այո՛, են հանդամանք ինչ զորս թերեւս մարթ իցէ ի նոցա արժանեաց սակի համարել, որպէս գտակն լինել ձեռնագրաց հնոց և հանել զնոսա ի հրապարակ, և որ առաւել իմն է՝ զկղկղանս յետին դարուց բառնալ մերժել զառաջինն ի մատենագրութենէ : Երկոքին առաջինքն ի հանդամանաց անտի զորս արկաք ի համար՝ չեն արդիւնք ներքին և սեպհական արժանեաց, որպէս ամենեցուն յայտ է, այլ դէպք իմն են և արտաքին պատահար : Եկեսցուք առերրորդն . աստ ունիմք ասել բազում ինչ : Որ էրն նոցա զառաջինն պատիւ և անուն պարծանաց՝ ամենեւին վրիպեալ զերծանէր ի ձեռաց նոցա : Մինչ զինչորագոյն և զթանձր աղտն ի բաց հանին ի բիրտ և ի խժադղուժ լեզուէ անտի յետին դարուց, զո՞ր արդիւնս բերին ի մէջ . ո՞րչափ քայլս ետուն դիմել յառաջ կոյս նորածին և սակաւ մի յստակեալ լեզուին : Յետ աւերածոյ և քանդման՝ պարտ էր շինութեան զնետ գալ : Այդմ ոկզբան նոքա բնաւ միտ ոչ եղին, և զոր քանդեցինն՝ չկարացին այլ եւս շինել և կանգնել : Զի՞նչ օգուտ եղեւ զի բարձին զաղաւաղեալ և զբիրտ բարբառն զայն ի միջոյ և եղին փոխանակ նորա ո՛չ զզուտ և զանխառն հայ բարբառ, այլ ամենեւին օտար իմն լեզու : Արկե՞ր տապալեցե՞ր զհայերէնն աղաւաղեալ, դիր փոխանակ նորա զանխառն և զյստակ բուն հայերէնն . ես զհայերէնն կամիմ, ոչ

զգաղիերէն, ոչ զգերմաներէն, ոչ զիտալերէն և ոչ այլ զինչ
և պէտ լեզու :

Գիտեմ զի ասելոց են ոմանք, և իմ խկ լուեալ է բա-
զում անգամ, թէ գիտել գիտեն նոքա քաջ հայերէն, բայց
քանզի հինն այն լեզու չէ յանկ և դիպօղ յայտ առնելոյ
զբարձրագոյն խորհուրդս և զազգի ազգի անբաւ և ան-
սպառ իմացութիւնս նորոյ աշխարհի, շրջըլեն զայն յաջ և
յահեակ և ի վեր և ի վայր և հալեալ ձուլեն և տան նմա
զիերպարանս նորոյ իմն և հզօրագոյն լեզուի . և քանզի ընդ
երկնիւք իտալիայ բնակին և զիենդանարար օդ նորա ծծեն,
զեռանդն և զհուր նորա սքանչելի լեզուին խառնեն հեղուն
ի լեզու մեր անդր, և այնպէս տկար նկուն և կիսամահ հայ
լեզուն կենդանանայ և առնի ողջ, կայտառ և հուժկու : Օ՞ն
անդր, քամ լիցի, բեւր անգամ քամ լիցի . ես ոչ կամիմ և
չներեմ իսկ շփել ալլո այնպիսի զմատենագրութեամբ չքնաղն
իտալիայ : Մայր է նա ամենայն եւրոպական մատենագրու-
թեանց : Յետ անկանելոյ հնոյ մատենագրութեանն և թաղե-
լոյ ընդ աւերակօք Հոռոմոց տէրութեան, նա առաջին պայ-
ծառացեալ կանդնեցաւ և եղեւ օրինակ բազում ազգաց Եւ-
րոպայ, որք կարի բիրտք էին յայնժամ և շրջէին ի խաւարի
տգիտութեան առ խարխափի : Քննեսցուք այժմ թէ զիանդ-
կամ յի՞մ իսկիք լեզու այժմու մատենագրութեան մերոյ նման
իցէ լեզուի որ մին ի կատարելագոյն լեզուաց է Նւրուպայ :
Եթէ ընդ բնաւ մատենագրութիւն իտալիայ անցանիցեմք,
չէ հնար մեզ գտանել բիծ ինչ կամ արատ ի կանոնաւորու-
թեան և յանթերի պահպանութեան օրինաց դպրութեան :
Որչափ և միտք վազս առեալ արշաւէին սանձարձակ ի մե-
ծատարած ասպարիզի ցնորական աննիւթն աշխարհի, օ-
րէնք դպրութեան, որ անխախտքն են ամենայն ուրեք, ան-
տես երբեք ոչ լինէին : Թերեւս գտանիցին մատենագիրք
երկրորդ կամ երրորդ աշտիճանի որ չունիցին զրուռն զայն
և զեռանդնալից ստեղծիչ ոդի և զբարձրագոյն ծնունդս
հանձարոյ, մանաւանդ ի բանաստեղծականս, սակայն ի կա-
նոնս դպրութեան որ բուն իսկութիւն և ծուծ լեզուի չ չէ
մարթ, չիք հնար վրիպանս ինչ կամ թերութիւն և կամ

կեղտ անփութութեան գտանել։ Ոչ զգոցին հակառակն տեսանեմք առ մատենագիրս մեր չ չէ մեր աստ վէճ զշանձարոյ և զծննդականութենէ մոտաց նոցա , այլ զբուն իսկ ատաղճէ , զնիւթական յօրինուածոյ լեզուին : Արդարեւ որպիսի՛ անհաստատութիւն և խարխափանք նշմարին ի պահպանութեան պարզագոյն իսկ կանոնաց դպրութեան , ո'րչափ անտեղեկութիւն նրբագոյն և ճարտարագէտ արուեստի հնոցն ի դարձուածս բանից և յարդարման մասանց բանի , որ խաղիմն են արդարեւ անօսր և փափուկ և արդասիք հզօր և հնարագէտ հանճարոյ : Քանի՛ օն զեղծմունք ի կազմել յօրինել վերադիրս անճակս , անտեղիս , տգեղս և բազում անգամ ամենեւին աւելորդս , մինչեւ ինել ճառին չեղջ իմն տգեղ աւելորդութեանց որ չեն այլ ինչ բայց միայն ճաշակի խանգարելոյ արդասիք : Բերցուք օրինակս ինչ ի բազմաց անտի :

Օբինակ

Գերասօքանչ — Գերաբուն — Գերածայր — Դժուարելակ (գագաթն լերին) — Մեղկազէտ (հեշտութիւն) — Ուռասասազարթ — Ոլորտապտոյտ — Իսկափայլ (իմաստութիւն) — Ուռնագորդ — Խրթնագիմակ (գիլք յորձանաց) — Ուտնաձեմ (քայլ) — Լայնափեռել — Հեղինամեմ — Ծփինաշարժ — Ճախրասլաց — Լանջաբերձ (անձն ,) այլովք բազմօք հանդերձ : — Թողումք զանուանս ինչ որ չեն ծանօթք և ընդելականք ընտիր մատենագրաց . որպէս Շուփ , Թոր , Խիրտ , Գով , Կափոյց (աչաց) : (*)

Ա. Պ. — Զի՞չ չարաչար դատափետես զմարդիկ որ այնչափ փոյթ և խնամք ունին զզարդացմանէ լեզուին և յորոց բազումք անդամք են Ակադեմիայ : Տեսցուք թէ ոյր իցեն

(*) Ի սոցին համարի են եւ բարբառք ինչ ազնուականք , ծնունդք անհաս արուեստգիտութեան , զդոս է տեսանել մերթ ի հրապարակի . օրինակ իմն . շէքէռաւ , շէռայւ , անյւ , է-համաւ (ազգ ինչ անառի՞ արդեօք ,) տէղէրուն , ուրիշուն (եթէ չիցէ ընթեռնուլ [կամ իմանալ] ուրիշուն ,) էրբէռունք , ժորուագուր , դիւենաւ , ուրտուաւ , լա-ուրտուաւ , էրլուաւաւ , տուց-հուաւունք , ուր-էւաւ , հանդերձ այլովք բազմօք . որք ածին ի մէջ օր ըստ օրէ յաւելուլ ի մեծութիւնս Հայերէն լեզուի

իրաւունք . բազմութեամնն մեծի որ նովիսր լեզուաւ վարի , թէ խմբի միոյ փոքու քսան կամ երեսուն գրչաց որ գրեն այլազդ , և որոց չիցեն թերեւս առաւել քան գհարիւր՝ արբանեակը :

Մ. Մ. — Սակաւ մի զկայ առ դու աստ . ես տաց փոխանակ քո պատասխանի : — Զերիս կէտս պարտ է նկատել ի բանադ .

Ա. — Փոյթ վասն զարգացման լեզուին .

Բ. — Ակաղեմիս որ և պէտ՝ զոր ոչ ճանաչեմք .

Գ. — Բազմութիւն գրչաց այնր ոճոյ և նոցա արբանեկաց , զորս մանաւանդ կուսակիցս պարտ է համարել քան արբանեակս . քանզի արբանեակն անուն զնմանիս կամ զզուդականս յայտ առնէ և ոչ զանուսումն տարապարտ զարմացողս :

Ա. — Կէտն առաջին ոշ տացէ մեզ յամել աստ երկարագոյնս . քանզի զայդմանէ իսկ է վիճն մեր : Զոր ինչ խօսեցաք մինչեւ ցայժմ ընդ երկար ժամն , յայտ առնէ թէ ոչ միայն չմարթացան զարգացուցանել , այլ մանաւանդ թէ վերի վայր հարեալ խանգարեալ աղաւաղեցին զոսկելին զանգին բարբառն մերոց նախնեաց և շրջեցին զնա ի խառնախօս խըղուըրտիւն հնչմանց և շնչմանց որ , քանզի հայերէն նշանագրովք գան ի յայտ , հայերէն համարեալ են : Սակայն պարտ եւս է մեզ ասել թէ գտանին ի նոսա մատենագիրք որ չեն կարի եպերելիք , քանզի գրեն երբեմն անխառն և գրեաթէ բնական , պարզ լեզուաւ , որպէս է տեսանել յառաջին մատենագիրս խմբին այնորիկ : Անկանոնութիւնք և խորթութիւնք վաղվաղակի ընդ ակն հարկանին , յորժամ մատենագիրն ի բարձրագոյն թուիչս ամբարձեալ ի մուացածին և յանձահ զարդս և ի սեթեւեթեալ ճամարտակութիւնս հատանիցի :

Բ. — Ակաղեմիս անուն բազում ինչ տայ յդանալ ի միտս : Տայ նա զմտաւ ածել թէ անդամք նորա պարտին ունել մեծատարած և կարի սերտ , հաստատուն գիտութիւն , խելամտութիւն բազում և խորաքնին , ճշգրիտ հմտութիւն յիրսն յայնոսիկ որոց վասն հաստատեալ է ժողովն այն : Արդ

տեսանեմք , և ամենեքին նոքա որոց միտք ազատք իցեն ի կանխակալ կարծեաց՝ կարեն տեսանել իբրեւ զմեղ , թէ այդ ամենայն պայմանք և առաւելութիւնք ոչ գտանին ի խմբի անդ մատենագրաց որ ընդ վայր պարծին տարապարտուց թէ հայերենագէտք իցեն : Յետ պատ ի պատ ճառիւք և պէս պէս հնարագիտութեամբ զաշս մոգելոյ զբազմութեանն և պատրելոյ՝ յաւելին տալ անձանց իւրեանց զանուն Ակադեմիայ : Յո՞ երթամք , բարեկամք . Ակադեմիա Հայերէն Լեզուի՝ որ ոչ խօսի հայերէն :

Ս. Գ. —Վասն բազմութեանն գրչաց զոր ի մէջ բերէ բարեկամն մեր Ա. Պ. , ասեմք թէ բազմութիւնն չնշանակէ ինչ , որպէս յայտ է , յորժամ ճշմարտութիւնն չէ ի նոցա թերէ : Միթէ ունիցին ինչ իրաւունս փերեւետելոյ քան զնոկն մատենագրաց յետին դարուց զորս ինքեանք իսկ նշաւակեալ արհամարհեցին զառաջինն : Լեզու նոցա գայուալից աղտեղի էր , իսկ սոցայն անկանոն է և խառն և ոչ հարազատ : Իսկ զբազմութենէ արբանեկաց կամ նոցա աշակերտելոյ ասեմք թէ զոր ուսանն՝ զայն արկանեն ի կիր . չիք նոցա մեղ յայդմ :

Յետ խօսելոյ եւս զիրաց և զիրաց՝ մեկնեցան իւրաքանչիւր յարարս իւր , խոստանալով յետ աւուրց ինչ միւսանգամ գալոյ ի մի ժողով :

Պ. Թ.



ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՈՒԻ

Ե

ԵԼԵՒԵԼ ԱՌՆԵԼ . Դէ մէկու յակնելու՝ իրար ժերազնոյելու զանցնել : *Երկու ժողովուրդք յորովայնէ քումմէ զատցին , և ժողովուրդ զժողովրդեամբ ելեւել առնիցէ , և երէցն կըրտսերոյն ճառայեսցէ : — *Վասակ քան զամենայն զօրսն ելեւել առնէր :

ԵԼԱՆԵԼ ԸՆԴ ԶԵԽՍ . Ինչինուր առանձնել : *Այնք բազում էին՝ որ առ ահին յիմարութեան ընդ իւրեանց զէնս ելանէին :

ԵԼԱՆԵԼ ԸՆԴ ՈՔ . ժըսիւր ժըս . ոսուծել . իւրել : *Հարգն մեր մեղան , և մեղք հարցն ընդ մեզ եին :

ԵԼԱՆԵԼ ԸՆԴ ԻՆՉ . բանի ճը ելլը . կատարուէլ : *Տեսցուք թէ երազք նորա ընդ ինչ ելանիցեն :

ԵԼԱՆԵԼ ԸՍՏ ԻՆՉ . դուրս ելլէլ անցնել : *Ամօթ համարեսցի վասն կուսին իւրոյ՝ եթէ ելեալ իցէ ըստ չափ : — *Ելին ըստ քաղաքն : — *Բատ Աստուծոյ երկիւղին սահմանս արտաքս ելեալ բարբանջեն :

ԵԼԱՆԵԼ ԶՄԻՄԵԱՄԲՔ . Դիու ճը յաշնել չանուլ : *Աէր՝ առանց կեղծաւորութեան . . . յեղբայրսիրութեան՝ գթածք , ի պատիւ՝ զմիմեամբք ելանել :

ԵԿԱԿՈԶ ԱՌՆԵԼ . դաստիարանի կանչել : *Զիք անդ երկիւղ , և ոչ կասկած , և ոչ իշխան եկակոչ առնէ : — *Գուցէ առնիցէ գքեզ . . . եկակոչ ժողվրդեան :

ՅԵՂՈՒԿՍ ԱՆԿԱՆԵԼ . իեղն նախէլ : *Կարի ողորմ խօսեսցի , և յեղուկս անկանիցի :

ԵՂԶԻՒՐ ԱՄԵԼ . ժողովանալ . իրութուալ : *Յորժամ կցածիցես իրր գէշ , և եղլիւր ածիցես իրրեւ զցուլ :

ԵՌԱՆԴԻՆ ԱՄԵԼ . շննիացնել . չառել . իրիւել : *Ածից քեզ եռանդն ի սրբութիւն ապստամբացդ : — *Այնպէս իմն եռանդն ածէին՝ սկիզբն արարեալ այլազգութեանն և հեթանոսութեանն : — *Զհոգեւոր սիրոյն եռանդն ածէր առ ամենեսին :

ԵՏ ԸՆԴ ԵՏ . անժշտուէ . Դիէն : *Թող անդէն ետ ընդ ետ լինէր նմա որդի : — *Ետ ընդ ետ իսկ ընդէր ոչ յլեաց :

ԶԵՏՆ ԱՌՆՈՒԻ . դարտիւլ . իւնուլ . կանչ առնել : *Զետղ առ Մովսէս առ դրան բանակին : — *Զետղ առեալ կայ :

ԱՌ ԵՏԵՂ . այն դեղ . անժշտուէն հան : Զբազումն առ ետեղ սատակէին : — *Համարէր թէ առ ետեղ իցեն :

ԵՐԱԶ ՏԵՍԱՆԵԼ . երազէլ : *Ետես երազ Յովսէփ և պատմեաց եղբարց իւրոց : — *Որպէս ոք զի տեսանիցէ երազ իտեսլեան գիշերոյ :

ԵՐԱՆԻ ՏԱԼ . երնել ըսէլ : *Ունկն որ լսէր՝ երանի տայր

ինձ : — *Յառաջ քան զվախման մի՛ տար երանի մարդոյ :

ԵԵՐԱԾԽԻ ԱՌՆՈՒԼԻ . ԵՐՉՅԱԿԱՆԻ ըլլալ : *Որ յերաշխի առնու զմանուկ անմիտ՝ թշնամանս առնէ օրինաց : — *Այր որ զմահապարտ յերաշխի առնու՝ փախստական լինի և ոչ ի հաստատութեան :

Կամ՝ իսսու դալը գրան առնել . նայել . հոգալ : *Ես առնում զդա յերաշխի . ի ձեռաց իմոց խնդրեաջիր զդա : — *Յառայի քոյ առեալ է յերաշխի զմանուկդ ի հօրէ իւրմէ : — *Պոպիսու , որ առ զմեղ յերաշխի զերիս աւուրս և սիրով ընկալաւ :

ԵԵՐԳ ԱՐԿԱՆԵԼ . ԵՐԺԻ հանել . եղանակ դնել : *Զօրհնութիւնս յերգ արկեալ նուադէ :

Կամ՝ սորչին գրոյ իսուն հանել . ծառել երժի առնելը . իսուն ընել : *Յերգ արկանեն , այնպանեն , ծաղր առնեն : — *Եզու ունիս , ոչ զի զայլս յերգ արկանիցես , այլ զի զԱստուծոյ գոհացօղ լինիցիս : — *Յերգ արկեալ հեգնեաց զերկպագութիւն կուապաշտիցն :

ԵՐԴՄՆԻ ԱՌՆԵԼ . ԼԻՆԵԼ . ԵՐԴՄՆԵՆ ընել : *Ուխտ եղ , երդմնի արար՝ զամենայն իրաւունս նոցա անդրէն դարձուցանել : * — Երդմնի եղեւ նոցա՝ եթէ ոչ ինչ տաց մեղանըլ ձեղ :

ԵՐԴՈՒՄՆ ՏԱԼ . ԵՐԴՄՆԵՆ ընել : *Բայց նախ երդումն տուր յաջ քո , զի մի ստեսցէ :

ԸՆԴ ԿԱՄ ԱՌ ԵՐԵԿՍ , ԸՆԴ ԵՐԵԿՈՍ . ԷՐԵԿՈՆԵԼ . ԷՐԵԿՈՆԱՆ դէմ : *Զենցես զզատիկն առ երեկս : — *ԵԼ իսահակ զքոսանել ի դաշտին ընդ երեկս : — *Ընդ երեկոյս ասիցես՝ թէ երբ լինիցի առաւուօ :

ԵՐԵԿՈԹՍ ԱՌՆԵԼ . ԱՌՆՈՒԼ . իջո՞ պեղը մասլ դիշը : *Աւուրս քսան երեկօթս առնէր : — *Երեկօթս առին ի լերինն աւուրս բազումն :

ԵՐԵՍ ԱՌՆԵԼ . ախածէլ . իսսու կարոբէլ : *Ոչ Աբրահամու աղաչանացն առնէր երեսս , և ոչ Պովտոյ : — *Ինձ երես արրա (իսադրու նայէ :) — *Յայլոց սլատկառի , և առնիցէ երեսս :

ԵԵՐԵՍ ԳԱԼ . աշջեւը դալ . ներկայանալ : *Առ վշտի նեղի (այր աղքատ) գալ յերեսդ քո և կողկողել :

ԶԵՐԵՍՍ ԴՆԵԼ, ՀԱՍՏԱՏԵԼ. Ա-ԿՐՈՒՔՆ ԴԵԿ է ԴԵԼ ԺՇ: *Եղ-
զերեսս իւր ի փախչել: — *Ինքն զերեսս հաստատեաց եր-
թալ յերուսաղէմ:

ԶԵՐԵՍՍ ԱՌՆՈՒԼ. ԵՇԻ-Ն ԿՈՂԵՆ (Խօսէլ:) *Առաքելոյ ա-
ռեալ զինքեամբ զերեսս ամենայն մարդկութեան (ասէ:)

Կամ՝ անիօններու բերնէն Խօսէլ: *Ոչ ասէ՝ թէ անձն կամ
շունչ իցէ գժոխոց, այլ երեսս առեալ (զզ. գժոխոց) կամի առ-
նել զբանն յայտնագոյն:

ՈՐՈ՞Վ ԵՐԵՍՕՔ. Է՞ն լւրեսով: *Որո՞վ երեսօք զդիւապաշտսն
հալածիցեն:

ԵՐԵՐ ԵՒ ՏԱՏԱՆ ԼԻՆԵԼ. Ա-ԿՐՈՒ-Ա-ԿՐՈ ՇԱՄ: *Կայէն երեր
և տատան եղեւ:

ԵՐԵՒԵՑՈՒՅԱՆԵԼ ԶԵՐԵՍՍ. Պ-ՊԵ-Ֆ-Լ. ԴԵ-Ե-Մ-Լ: *Տէր . . .
երեւեցուցէ զերեսս իւր ի քեզ: — *Երեւեցո զերեսս քո ի
ծառայս քո: — *Երեւեցո զերեսս քո և ողորմեա մեզ:

ԵՐԵՔՆԱՐՈՐ ԱՌՆԵԼ. Գէ Է-Ն-Ը ԿՐԻ-Ն Պ-Պ-Ո-Ե-Լ Ի-Ի-Ե-Լ:
*Պարտ է երեքնարօր առնել զբանն:

ԵՐԹԵՒԵԿՍ ԱՌՆՈՒԼ. Ե-Բ-Մ-Լ Է-Մ-Լ. Պ-Պ-Պ-Է-Լ: *Երթեւեկս
առնոյր ընդ խորանն: — *Ի մեծ և ի գեղեցիկ հրապարակին
զերթեւեկս առեալ չընէր:

ԵՐԿՍ ԱՐԿԱՆԵԼ. Ջ-Ն-Մ-Լ. Պ-Պ-Պ-Է-Լ: *Հանապազ երկս ար-
կանէր բարեխորհուրդն, զի հաստատուն կալ կարասցէ թա-
գաւորութիւնն :

ԵԵՐԿՄԻՏՍ ԼԻՆԵԼ. Ե-Բ-Մ-Լ. Ջ-Մ-Ջ-Ե-Լ. Կ-Ա-Կ-Ջ-Է-Լ: *Եթէ
յերկմիտս ոք իցէ, ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ: — *Եթէ
զսիրելին վասն մեր եւս, ի՞ր վասն այլոցն յերկմիտս լինիք:

ԵՒՍ ՔԱՆ ԶԵՒՍ. Ե-Ե-Ը-Ւ. Ե-Բ-Մ-Լ. Ա-Ե-Լ: *Հոլանեցաց
սոյնպէս եւս քան զեւս: — *Սովո՞ եւս քան զեւս սաստկա-
նայր:

Յ. Գ.

(ԿԱՏԱՐԱՆ «Ե» ՆՇԱՆԱԳՐԻ)

ԽՆԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԴԻՍԻՄ

Յ. ԳՈՒՐԳԵՆ Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Վ. Բ Ի Պ Ա Կ Ք

	Եջ Տող	Վարիպակ	Ուզիղ
(յԱ. Թուին)	8 18	մատեան	մատեանս
	12 15	այլոցն	այլոցն
	12 20	նորանշան՝ նորա- սրանչ	նորանշան նորասրանչ՝
(յԳ. Թուին)	27 25	Լիւկոթոյէ	Լիւկոթոյէ
	48 33	ջոկս,	ջոկս .
(ի Դ. Թուին)	64 17	+	+
(ի Ե. Թուին)	75 34	բարձ	բարձր
	79 27	տենչանաց քոց :	տենչանաց քոց . բայց թերեւս յետ վտանգին անցանելոյ եկեսցէ ի թեզ դարձեալ յանդզ- նութիւն :
(ի Զ. Թուին)	81 4	ամենեսին	ամենեսին
	99 16	գոյիւ իւրով չափ	գոյիւ իւրով, գոյիւ չափ
(յԵ. Թուին)	112 7	եւ եւս	եւ ես
(յԸ. Թուին)	113 19	Ենեայ	Ենեայ
	119 8	յարգաղիս	յարգանդիս
	128 7	զգիտութեաեց	զգիտութեանց
	128 10	մատեան	մատեան մի
	130 13	մատեանս	մատեանս՝
(ի Թ. եւ Ժ. Թիւս)	133 13	տխտին	ախտին
	144 25	Արիստակեաց . . . յԵկեցեաց	Արիստակեայ . . . յԵկե- ղեաց
	152 4	Յիմաստութիւնս	Յիմաստութիւնդ
	154 26	Ակաղեմիայն մեր...	Ա. Պ. — Ակաղեմիայն մեր . . .
	162 4	զԴէմ ընդ ընդդէմ	զԴէմ ընդդէմ
(ի ԺԱ. եւ ԺԲ. Թիւս)	147 19	Յուստիանոս	Յուստինիանոս
	183 22	Թոշակըն փոխանակ	Փոխակըն

پ، پ، گ، پ، پ

۶ ۷ ۸ ۹ ۱ ۲ ۳